

Չանցաւ շատ ժամանակ՝ Ռշտունեաց երկիրը կը տանէին հայրենական շիրմաց մէջ դնելու այն մարդուն մարմինը, որ եօթանասուն երկայն տարիներու մէջ առաջին մարդն եղած էր աշխարհին սիրած էր իր հայրենիքը, մորմոքեր էր իւր ազգին ցաւոց եւ տառապանաց վրայ, իւր կեանքը չէր խնայեր ոչ պատերազմի եւ ոչ խաղաղութեան մէջ, ամէն ջանք ինչ որ մարդկօրէն կարելի էր՝ աշխատէր էր ի գործ ունել եւ վերջապէս տխուր, դառնացեալ, բայց ոչ երբեք յուսահատ եղել էր: Իւր վերջին խօսքերը փեսին Գրիգորի ասոնք եղան.— «Իմ երկար կենացս մէջ, որդեակ իմ, վասնզի թշուառութեան եւ ձախորդութեան տարիներն երկայն են միշտ, միմիայն գեղջ եւ ապաշաւ այն եղաւ, որ իմ հայրենակցաց անիրաւութիւնը պատուհասելու համար՝ օտարին զենքը հրաւիրեցի, չի կրցի նախատեսել թէ օտարին շահասէր բարերարութիւնը ընտանեաց անիրաւութենէն վատ է, եւ դորայ պատիժը ահա կը կրեմ օտարութեան մէջ վերջացնելով կեանքս: Այո, արդար են աստուծոյ դատաստանները: Դու՝ այնպէս կը հաւտամ, որ Յայաստանի կեանքին մէջ պիտի խառնուիս եւ պիտի գործես: Յորդորէ՛, խրատէ ամենքն, որ եթէ չեն կարող պատժել համբերութեամբ տանին իրարու պակասութեանց, յանցանաց եւ եղեռանց անդամ, այլ անբաւելի ոճիր համարին օտարը հրաւիրել, օտարին՝ հայրենի երկիրն ոտնակոխ ընել տալ»: